ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.: (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՇԱԲԱԹ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017Թ.
№ 32 (450)
www.syuniacyerkir.am

Հայաստանը գբօսավայր չէ՛, տիգնեսի շուկայ չէ՛, անցագիր չէ՛. վա՜յ մեզի, երբ միայն այսպէ՛ս մօտենանք Հայաստանին: Արդ, մէկ կողմէն՝ բարեսիրական գործերով, եւ միւս կողմէն՝ «եկէք տիգնես արէք» ըսելով... չենք կրնար հզօր Հայաստան կերտել:

ԱՐԱՄ Ա. կաթողիկոս

Լեոնիդ Գրիգորյան. «Հպարտությամբ եմ մտել բանակ եւ նույնպիսի հպարտությամբ էլ հրաժեշտ եմ տալիս, բայց միշտ կանգնած կլինեմ հայոց ազգային բանակի շարքերում»

Երեսուներեք տարի զինվորական գործին նվիրված, խանմեկ եւ ավելի տարի Կաղանի զինվորական կոմիսարի դաշտոնը զբաղեցրած, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանն անցավ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի:

Տարիներ շարունակ առած-չարածի, վերադրածի, անցյալին գնահատական տալու մասին է զրույցը փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանի հետ, ով երբեք չի հեռացել հայրենիքի հզորության ու բարգաւաճման համար մարտնչելու ճշմարիտ ուղուց, իր զինվորներին տվել է անփոխարինելի զենք՝ հրամանատարի անձնական օրինակ՝ նրանց ներշնչելով համարձակություն, խիզախություն եւ անկոտրում կամք:

- **Պարո՛ն Գրիգորյան, եթե ամփոփենք, քանի՞ տարի է՝ զինվորական ծառայության մեջ եք:**

- 1982թ. ապրիլի 13-ին Ղափանի զինկոմիսարիատից զորակոչվել եմ խորհրդային բանակ, ծառայել Գերմանիայի Մայսեն քաղաքում՝ 11-րդ տանկային դիվիզիայի զենիթահրթիռային գնդում: Ծառայությունս այնպես անցավ, որ գնդի հրամանատարն ինձ հորդորեց մնալ բանակում: Ենթասպայի կոչում ստանալուց հետո սկզբնական շրջանում զինվորական ճաշարանի պետ էի,

էջ 6

Կարեն Կարապետյան. «Որոշել ենք գյուղացիների պարտքերը զիջել, այսուհետ շատ կոշտ կարգադրությամբ գնում ենք, նայեք նկարչություն չլինի»

Կառավարության սեպտեմբերի 14-ի նիստին վարչապետ Կարեն Կարապետյանն անդրադարձավ գյուղատնտեսական ոլորտում զանազան ծրագրերով գյուղացիներին տրամադրվող պարարտանյութերի եւ սերմերի դիմաց պարտքերի հավաքման խնդրին:

Խոսելով 2012-2016 թվականների ընթացքում ձեւավորված պարտքի մասին՝ վարչապետը հիշեցրեց, որ դեռեւս մայիսին տրվել էր հանձնարարական, որ կազմեն ցանկն այն գյուղացիների, ովքեր դեռեւս պարտքեր ունեն: Գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը հայտնեց, որ դիմել են Տարածքային կառավարման նախարարություն ու մարզպետարաններ, որպեսզի հասցեատերերի ցուցակները ներկայացնեն:

«**Դեռեւս հստակ չկան ցուցակները, քանի որ մարզպետարանները տրամադրում են դրանք, հետո պարզվում է, որ թերի են լինում, նորից հետ ենք տալիս, նորից լրացումներ կատարում: Մինչեւ չլինեն անվանական ցուցակները, չենք կարող ամփոփել ու ներկայացնել կառավարություն՝ զիջելու կամ այլ կարգադրություն տալու համար»**, - ասաց գյուղատնտեսության նախարարը:

Վարչապետի դիտարկմամբ՝ 2017թ. այս առումով պարտք չի եղել եւ նշեց, որ այս տարի սուբսիդավորման մեխանիզմների տրամադրման ժամանակ ֆինանսական կարգապահությունը 100 տոկոսով է եղել:

«Մենք որոշել ենք, որ այն պարտքերը, որոնք կուտակվել են գյուղացիների մոտ, զիջել համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում եւ մաքուր էջից սկսել, քանի որ պրակտիկան թույլ է տալիս առանց պարտքերի կարգավորել այդ խնդիրը», - հայտնեց նա:

էջ 2

«Սյունյաց երկիր»-ը 14 տարեկան է

Հոկտեմբերի 1-ին «Սյունյաց երկիր» թերթը դառնում է տասնչորս տարեկան:

Շնորհավորում եմ խմբագրակազմի իմ սիրելի գործընկերներին, պարբերականի եւ կայքէջի հազարավոր ընթերցողներին, մաղթում նրանց հաջողություններ՝ ակնկալելով հետագա համագործակցություն:

Շնորհավորանքս եմ ուղղում բոլոր նրանց, ովքեր անցած տարիներին աշխատել են խմբագրությունում. ասել եմ՝ անկախ ամեն ինչից խմբագրությունն այսօր էլ նրանց համար պապոնց տուն է, հայրենի օջախ, որտեղ, ինչպես ասում է Գուսան Աշոտը, «հիշատակ կա», «կենաց սիրտ կա», «չմարող վառ կրակ կա»:

Շնորհավորանքս բոլոր նրանց, ովքեր ե՛ւ բարոյական, ե՛ւ նյութական աջակցություն են երբեւէ ցուցաբերել թերթին:

Այդ տարիների ընթացքում թերթը, հիրավի, դարձել է Սյունիքի հոգեւոր-մշակութային, հասարակական-քաղաքական կյանքի անքակտելի բաղադրիչը. դա շատերի կարծիքն է:

Հանրապետության գիտական շրջանակներում էլ թերթը վաղուց Սյունիքի նորագույն շրջանի պատմության սկզբնաղբյուրի ընկալում ունի: Իսկ գրականագետ, գրաքննադատ Դավիթ Գասպարյանի դիտարկմամբ՝ **«Սյունյաց երկիր» թերթն այսօր դարձել է Սյունյաց աշխարհի դեմքը եւ կարող է իր հերթին եղանակ թելադրել ընդհանուր գրական-մշակութային ասպարեզում:**

«Սյունյաց երկիր» թերթն այս ձեւով ես տեսնում եմ որպես Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմության» շարունակություն»:

Թերթի գլխավոր նպատակը եղել եւ մնում է նույնը՝ լինել սյունիքյան իրականության ճշմարիտ վավերագրողը, փաստագրողը. այդ առաքելությունը հռչակել ենք դեռեւս 2003 թվականին թերթի անդրանիկ համարում:

Ինքներս մեզ համարել ենք (եւ համարում ենք) մեր փոքր հայրենիքի ե՛ւ տերը, ե՛ւ մշակը, ե՛ւ ծառան ու պատվախնդիրը:

Առաջնորդվել ենք արքուն խղճով, երբեք չենք տառապել ուղղափառությամբ, առավել եւս՝ ուղղափառ անհանդուրժողականությամբ:

Փորձել ենք տեսնել այսօրվա օրը պատմության մեջ, զգալ գալիք օրերի շունչը, տագնապել, մաքառել, հուսալ:

Մեր ընդհանուր թերությունների, բացթողումների, մեղքերի համար առաջինն ենք ամաչել, հոգսերի համար՝ մտահոգվել, հաղթանակների եւ հաջողությունների համար՝ ուրախացել, հպարտություն ապրել:

Երբեք կռիվ չենք փնտրել, այլ՝ միաբանություն, համերաշխություն, միասնություն «սպիտակների» եւ «կարմիրների», հների եւ նորերի, տարբեր հավատամք եւ դիրքորոշում ունեցողների միջեւ:

Մեզ համար կարեւոր են եղել խոսքը, խոսքի մաքրությունը, հայերենի հարստության պատշաճ գործածումը, ոճը, պատասխանատվության զգացումը, փաստերի հավաստիությունը, քանի որ, ինչպես ասված է, երկրի վրա ինչ-որ լինում է՝ լինում է նախ խոսքի մեջ: Եվ, ի վերջո, երկիրը հայրենիք է դառնում խոսքով, նաեւ (ու անպայման) լրագրողական խոսքով, եթե, իհարկե, կարողանում ես խոսքդ կառուցել պատշաճ ձեւով, առանց պարտադրանքի եւ ոչ նման այն աշակերտի, որ ընդամենն առաջադրանք է կատարում: Եվ եթե լրագրողն անկեղծորեն կամեցել է մեր փոքր հայրենիքը, նաեւ մեր հանրապետությունը գոնե մի քիչ բերել իր ուզած տեսքին, ապա իրեն օգնական է համարել բարձր խոսքը:

էջ 2

Աշոտ Մինասյանին «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով պարգեւատրելու մասին

Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով եւ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ Հայրենիքի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած արիության համար ազատամարտիկ Աշոտ Հրանտի Մինասյանին պարգեւատրել «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյան

Հ.Գ. «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը շնորհավորում է Աշոտ Մինասյանին՝ հայրենիքի բարձր պարգեւին արժանանալու համար:

Մեր Պոլոսկովին՝ Անանիա Շիրակացու մեդալ՝ պետությանը վճարված հարկերը մեկ տարում 29 մլրդ դրամով պակասեցնելու համար

Սեպտեմբերի 11-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության տոնի առթիվ, «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մեր Պոլոսկովը պարգեւատրվել է պետական բարձր պարգեւով՝ Անանիա Շիրակացու մեդալով:

Մեր Պոլոսկովն առայժմ հայ հանրության ծանոթ է մեկ քաջագործությամբ: Նա կարողացել է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը խոշոր հարկատուների ցուցակի առաջին տեղից հասցնել 16-րդ տեղ, իսկ 2016 թվականին (2013-ի համեմատությամբ) 29 մլրդ դրամով հարկ պակաս վճարել պետական բյուջե:

Շնորհավորում ենք:

«Սյունյաց երկիր»

Ռուբեն Վարդանյանը հետաքրքրված է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ով

Գործարար եւ բարերար, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի (IDeA) համահիմնադիր Ռուբեն Վարդանյանը հետաքրքրված է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ով:

Հիշեցնենք, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը պատկանում էր Մաքսիմ Հակոբյանին: 2014-ի հունիսի 24-ին կոմբինատի երկարամյա տնօրեն Մաքսիմ Հակոբյանն ազատվել էր տնօրենի պաշտոնից՝ նշանակվելով կոմբինատի խորհրդի նախագահ: Որոշումից հետո կոմբինատի 75 տոկոսի բաժնետեր գերմանական «Քրոնիմետ մայնինգ» ընկերությունը մրցույթ էր հայտարարել, որտեղ հաղթող էր ճանաչվել ավստրալացի ինչ-որ մեկը՝ նշանակվելով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն: Օտարերկրացի տնօրենը կամաց-կամաց սկսել է իր թիմին ներգրավել կոմբինատի աշխատանքներում:

Այսօր արդեն հայազգի գործարար Ռուբեն Վարդանյանը եւ իր ռուս գործընկերները, մեր ունեցած տեղեկություններով, հետաքրքված են կոմբինատով:

Նրանք նույնիսկ հանդիպումներ են ունեցել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ, որոշ համաձայնություններ ձեռք բերել, սակայն այլ մանրամասներ հայտնի չեն:

hayeli.am
22 սեպտեմբերի 2017թ.

Կարեն Կարապետյան. «Որոշել ենք գյուղացիների պարտքերը զիջել, այսուհետ շատ կոշտ կարգադրությամբ գնում ենք, նայեք նկարչություն չլինի»

էջ 1

Վարչապետը հանձնարարեց մարզպետներին՝ մեկ ամսվա մեջ կազմել պարտապանների վերջնական անվանական ցանկերը ու ներկայացնել, որն էլ նախարարությունն էլ մեկ ամսում պետք է ամփոփի:

Բացի այդ, Կարեն Կարապետյանը գյուղատնտեսության նախարարին հանձնարարեց պարտքի ցանկը ստանալուն պես համապատասխան առաջարկություն ներկայացնել պարտքերի զիջման մեխանիզմների կիրառմամբ:

«Այսուհետ շատ կոշտ կարգադրությամբ գնում ենք, բոլոր միջնորդ կազմակերպություններին հանում ենք, աշխատում ենք ուղիղ հասցեատիրոջ հետ, մի անգամ պայմանավորվում ենք խաղի կանոնների մասին ու գնում ենք առաջ», - ասաց նա:

Խնդրի շրջանակներում վարչապետը տարածքային կառավարման նախարար Դավիթ Լոքյանին էլ հանձնարարեց մաքսիմալ ուշադիր լինել այդ ցուցակների նկատմամբ, քանի որ նախկին պրակտիկայի մեջ դեպքեր են եղել, որ «ֆիկտիվ հասցեատերեր են եղել»:

Արձագանքելով ասվածին՝ Դավիթ Լոքյանը նշեց, որ պարզապես կան գյուղապետեր, ովքեր չեն բաշխել գյուղատնտեսական այդ սերմերը, պարարտանյութերը եւ այլն, եւ նրանցից ոմանք օրինակ ՀՀ-ում չեն, եւ խնդիրը հենց սա է:

«12 տոկոսով է պակաս ամբողջ գումարից, 12 տոկոսն այն գյուղապետերն են, ովքեր ստացել են, չեն բաշխել կամ այլ խնդիր է եղել», - ասաց նա:

Ի պատասխան ասվածին վարչապետը հարցրեց, թե այսինքն՝ 12 տոկոսը հասցե չունի՞, իսկ նախարարը դրական պատասխանեց:

«Գյուղապետերի մեծ մասը կա՞ն», - շարունակեց հարցադրումները վարչապետը եւ Դավիթ Լոքյանը կրկին դրական պատասխան տվեց, որից հետո վարչապետն ասաց. **«Դե գյուղապետերից ստացեք, գյուղացուց մի ստացեք, գյուղապետերից ստացեք, եթե հասցեատիրոջը չի հասել, ի՞նչն է խնդիրը: Նայեք, որ նկարչություն չլինի»:**

«Սյունյաց երկիր»-ը 14 տարեկան է

էջ 1

Չգիտեմ՝ կարողացե՞լ ենք այդ բարձրությանը հասնել, թե՞ ոչ, բայց ձգտել եւ ձգտում ենք:

Ու այդ ամենի պատճառով ենք ժամանակ առ ժամանակ հայտնվել ու հայտնվում թիապարտի նստարանին, այդ ամենով ենք դարձել ոչ միայն մեր ժամանակի ճշմարիտ վկան, այլեւ ժամանակը կերտողներից մեկը մարզում:

Թերթն իր կյանքի 15-րդ տարին է թեւակոխում ե՛ւ բարոյապես ու հոգեպես, ե՛ւ տնտեսապես կայուն վիճակում, իր առաքելության ու արժանապատվության հստակ գիտակցումով:

Թերթն իր գործունեության հերթական տարեշրջան է թեւակոխում ստեղծագործական բազում հետաքրքիր եւ սպասված ծրագրերով:

Թերթի լսարանն աստիճանաբար, բայց եւ անընդհատ նոր սահմաններ է ընդգրկում: Միայն վերջին երեք-չորս ամսում կայքէջի ընթերցումների թիվն ամսական վեց հազարից հասել է մոտ երկու հարյուր հազարի (սեպտեմբեր ամսվա արդյունքներով):

Թերթի խմբագրությունը, առանց չափազանցության, անցած տարիներին եղել, հիմա էլ մնում է լրագրողական կադրերի իսկական դարբնոց մարզում: Խմբագրությունում մեկ-երկու տարի աշխատած լրագրողը եւ անգամ մեքենագրուհին (համակարգչային օպերատորը) չափազանց պահանջված են մարզի տարածքային կառավարման մարմնում եւ մարզի խոշորագույն տնտեսվարողի գրասենյակում. բազմաթիվ օրինակներ ունենք:

Բայց մոտ մեկուկես տասնամյակը քիչ ժամանակ չէր, հարկավոր էր դիմանալ մարտահրավերներին, քննություն բռնել տեղեկատվական դաշտի անսահմանության մեջ:

Այդ ընթացքում միայն մարզկենտրոնում հիմնադրվեց եւ փակվեց յոթ պարբերական, որոնք, ի դեպ, գործում էին ֆինանսական ապահովության մեջ եւ իշխանական բարձր հովանու ներքո, բայց «Սյունյաց երկիր»-ը կա եւ գործում է:

Հիմնախնդիրները, այդուհանդերձ, ե՛ւ օբյեկտիվ, ե՛ւ սուբյեկտիվ, մեզ ուղեկցել են գրեթե բոլոր տարիներին:

Իսկ այսօր… Անցյալի արգահատելի որոշ դրսեւորումներ՝ առավել գռեհիկ եւ վայրենի արտահայտությամբ, հայտնվել են մեր առօրյայում:

Մարզային իշխանության գլխին հայտնված միջակների եւ պռատների փաղանգը պատերազմ է հայտարարել «Սյունյաց երկրին»: Բայց նրանց գրոհի այս պահին մենք չենք տրվում անհույս տխրության, այլ՝ ինչ-որ առումով, հպարտանում եւ գոտեպնդվում ենք՝ նկատի ունենալով, որ անկախ Հայաստանում մարզային մի լրատվամիջոցի դեմ պայքարելու համար ոտքի են հանվել այդքան ուժեր՝ ֆինանսական եւ իշխանական աներեւակայելի մեծ լծակներով. ուրեմն թերթն իր տեղում է եւ ճիշտ ճանապարհի վրա է:

Եվս մեկ անգամ ասեմ՝ բոլոր այդ ուժերը՝ միասին վերցրած, չեն կարող շեղել-խաթարել պարբերականի կայուն, աներեր, հստակ ընթացքը:

Բայց թերթի հավատամքը եւ անունը՝ ընդօրինակած Պատմահոր ձեւակերպումին, թույլ չեն տալիս, այդուհանդերձ, որ մենք խռովենք, նեղանանք որեւէ մեկից, որեւէ մեկի հանդեպ քինախնդրությամբ լցվենք:

Հրանտ Մաթեւոսյանն է ասում՝ «**Նույն տան որդիները կարող են չսիրել միմյանց եւ կարող են նույնիսկ իրենց հորը չսիրել, բայց հայրն իրեն իրավունք չի տալիս նրանց վերաբերմամբ նույնպիսին լինել…**»:

Այնպես որ՝ շատերը կարող են միանալ մեզ հայտարարված պատերազմին (իրենց գործն է), բայց մենք նեղանալ չենք կարող, նրանցից օտարվել չենք կարող, քանի որ բոլորինն ենք, բոլոր սյունեցիներինը, նաեւ մեզ չսիրողներինը, նաեւ մեր մասին անանուն կամ կեղծ ստորագրությամբ նյութեր տարածողներինը:

Այո՛, երբեմն որոշներին կշտամբանք ենք ցույց տալիս, բայց թշնամանք, կույր ատելություն՝ երբեք:

Եվ նման աշխարհայեցողությամբ, ձեզ հետ միասին, սիրելի՛ ընթերցող, ոտք ենք դնում «Սյունյաց երկրի» ստեղծագործ երթի 15-րդ տարում:

Ծնունդդ շնորհավոր, «Սյունյա՛ց երկիր»:

Մի՛ մոռացիր՝ հազարավոր մարդիկ Սյունիքում եւ մարզից դուրս ամեն օր քո խոսքին են սպասում:

Քո ազնիվ ընթացքին՝ անվախճանություն՝ հանուն Սյունիքի եւ Հայաստանի Հանրապետության:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՀ վարչապետն ընդունել է որոշում Գորիս համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու մասին

Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանի 2017թ. սեպտեմբերի 14-ի որոշմամբ Գորիս համայնքի ղեկավարի պաշտոնակատար է նշանակվել Առուշ Առուշանյանը:

Առուշ Գագիկի Առուշանյանը ծնվել է 1991թ. մարտի 12-ին Սյունիքի մարզի Գորիս քաղաքում: 1997-2007 տարիներին սովորել է Գորիսի Սերո Խանզադյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցում: 2007թ. ընդունվել է Երեւանի տնտեսագիտական համալսարանի ազգային տնտեսագիտության ֆակուլտետը եւ սովորել մինչեւ 2009թ.: Ելնելով նպատակահարմարությունից, 2009թ. տեղափոխվել է Գորիսի պետական համալսարան՝ տնտեսագիտության ֆակուլտետ եւ ավարտել 2011թ., որպես տնտեսագիտության բակալավր: 2012թ. ընդունվել է նույն ֆակուլտետի մագիստրատուրան եւ ավարտել 2014թ.: 2008թ. օգոստոս ամսից հիմնադրել է «Գոր Մետալ» ՍՊԸ-ն: Հանդիսանում է «Գոր Մետալ» ՍՊԸ-ի տնօրենը եւ զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ:

2016 թվականից ՀՀԿ անդամ է:

Ամուսնացած չէ:

Գորիս համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունը՝ նոյեմբերի 5-ին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ս.թ. սեպտեմբերի 14-ի նիստում քննարկել է նաեւ Գորիս համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն անցկացնելու մասին հարցը:

Ընդունված որոշմամբ Գորիս համայնքում համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն կանցկացվի 2017թ. նոյեմբերի 5-ին:

Կայանալիք ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման համար կառավարության պահուստային ֆոնդից ֆինանսական հատկացումներ են արվել:

Կառավարության նույն նիստում, մինչ այդ, բավարարվել է Գորիս համայնքի ընտրյալ ղեկավար Վաչագան Ադունցի հրաժարականի դիմումը:

Սեփ. լրատվ.

Ինչո՞ւ իշխանազրկվեց Վաչագան Ադունցը

Սեպտեմբերի 8-ի օրվա վերջին, երեք օր շարունակ Երեւանում ինչ-որ մարդկանց հետ բանակցելուց հետո, Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցը վերադարձել է Գորիս եւ ժամը 18-ին հրաժարականի դիմում գրել ու ներկայացրել ավագանու անդամներին:

Հրաժարական ներկայացնող համայնքապետը մշուշոտ պատասխաններ է տվել ավագանու անդամներին, ովքեր փորձել են իմանալ՝ ինչո՞ւ է հրաժարական տալիս, ո՞վ է դրդել հրաժարականի, ի՞նչ փաստարկների զորությամբ են հրաժարական պահանջում:

Դիմումի մեջ նշված հիմնավորումն էլ՝ «առողջության պատճառով», ինքը համարել է ֆիկցիա՝ մտացածին ձեւակերպում՝ հրաժարականը գոնե այդպես եւ առերեւույթ հիմնավորելու համար:

Դե ինչ, իր գործն է ի վերջո. եթե վաղաժամ հրաժարվում է Գորիսի ընտրողների մեծագույն մասի վստահության քվեից, թող հրաժարվի:

Սակայն իրավունք չուներ, կարծում ենք, հրաժարական տալ՝ առանց ընտրողների հետ անկեղծանալու: Հաշվի չնստել իրեն ձայն տված հազարավորների հետ, հաշվետու չլինել նրանց՝ առնվազն հարված էր Գորիսի արժանապատվությանը:

Եվ նրա անբացատրելի լռությունը, ներփակվածությունն անորոշության, կասկածանքի, խորհրդավորության մառախուղով են պատել գորիսյան իրականությունը:

Օգտվելով անորոշությունից, հիմք ընդունելով իրադարձությունների անդրկուլիսային բնույթը՝ մայրաքաղաքային լրատվամիջոցները ժամերի ընթացքում մի քանի վարկած առաջադրեցին տեղի ունեցածի առնչությամբ եւ գնահատականներ տվեցին:

Դրանցից մեկ-երկուսի վերաբերյալ մեր դիտարկումները չենք կարող չհայտնել:

Հրաժարականի պաշտոնական վարկածը դիմումի հիմքում դրվածն է՝ «առողջության պատճառով»: Դրա սնանկության մասին արդեն ասացինք: Երանի մեր շատ նախարարներ, մարզպետներ, համայնքների ղեկավարներ, այլ պաշտոնյաներ Վաչագան Ադունցի նման առողջ լինեին ֆիզիկապես:

Երկրորդ վարկածը, թե իբր տեղի ունեցածը գործող մարզպետի կամքի կատարում էր, նույնպես ցնորք է: Ավելի ստույգ՝ Վահե Հակոբյանի շուրջ տեղի ունեցող զարգացումները եւ Վաչագան Ադունցի հետ կապվածը տարբեր գործընթացներ են:

Վահե Հակոբյանն այնքա՜ն զգուշավոր է, որ առանց Երեւանի գիտության քար չէր նետի համայնքապետի ուղղությամբ:

Պարզապես շատ հարմար առիթ է, որ դիպվածը ներկայացվի իբրեւ սեփական հաղթանակ՝ վաղուց երերացող վարկանիշը գոնե մի քանի օրով փրկելու համար:

Եվ եթե ոմանք ինքնամխիթարության համար կատարվածն անպայման ուզում են համարել Վահեի հաղթանակ՝ թող համարեն…

Իսկ գնահատականը, թե Վաչագան Ադունցը նախորդ մարզպետի «բաստիոնն» էր, ինչի համար էլ պաշտոնանկ արվեց, մեծագույն անհեթեթություն է:

Վաչագան Ադունցը, քանիցս ասել ենք՝ լավ մարդ ու քաղաքացի է, ինտելեկտուալ է, կազմակերպչական ջիղ եւ փորձ ունի, բայց ինքն ինչ-որ մեկի «բաստիոն» չի կարող լինել, այդ բնույթը չունի:

Այո, ժամանակին Սուրեն Խաչատրյանն էր նրա թեկնածությունը պաշտպանել, ինչպես պաշտպանել է Սիսիանի, Կապանի, Մեղրու, Քաջարանի ներկայիս քաղաքապետերի թեկնածությունը, որոնք այսօր էլ գործող մարզպետի հետ են, բայց…

Որեւէ համայնքապետ (առհասարակ) պետական մեր համակարգում չի կարող որեւէ մարզպետի «բաստիոն» լինել: Մարզպետին համայնքապետերն ընդունում են այնքան ժամանակ, քանի դեռ մարզպետ է, իսկ երբ վերջինս իջնում է նժույգից, առաջինն իրենք են նրան հայհոյում եւ նորանշանակին հավատարմության երդում տալիս (մի՞թե մոռացել եք հնագույն բանաձեւը՝ «թագավորը մեռավ, կեցցե՛ թագավորը»): Վաչագան Ադունցն էլ, ինչպես իր կոլեգաները, քանիցս փորձել է հավատարմության երդում տալ Վահե Հակոբյանին, նույնիսկ ապրիլի 2-ի ընտրություններից առաջ հօգուտ նրա ճառ է ասել Գորիսի թատրոնի դահլիճում (մարզպետի խնդրանքով), բայց վերջինս (ի վերջո) հաշտության չի գնացել, քանի որ վերեւում արդեն իսկ որոշված էր Վաչագան Ադունցի քաղաքական ճակատագիրը:

Մոտ մեկ տարի սյունիքյան անցուդարձի հետ կապ չունեցող Սուրեն Խաչատրյանի անունն այս դեպքում շահարկելը վերստին ցույց է տալիս, որ հետեւողականորեն փորձ է արվում հանրության ուշադրությունը շեղել մարզում տեղի ունեցող գործընթացներից, որոնց դերակատարները միանգամայն այլ մարդիկ են՝ բոլորովին ուրիշ հետաքրքրություններով ու շահերով:

Մինչդեռ, ինչպես ակտիվորեն շրջանառվում է Գորիսում, դեռեւս ս.թ. փետրվար-մարտին են Երեւանում քննարկել Գորիս համայնքի ղեկավարի փոփոխության հարցը եւ ընդունել որոշում:

Այդ ժամանակ էլ հանձնարարվել է գործող մարզպետին՝ խաղաղ ճանապարհով եւ անաղմուկ Վաչագան Ադունցին հեռացնել իշխանությունից, բայց վերջինս դիմադրել է՝ հայտարարելով, որ ինքն ընտրվել է ժողովրդի կողմից եւ մինչեւ 2021 թվականը Գորիսը կառավարելու մանդատ ունի: Դրանից հետո էլ բարձր իշխանությունները նախաձեռնությունն իրենց ձեռքն են վերցրել:

Իսկ ինչո՞ւ են բարձր իշխանությունները Վաչագան Ադունցի պաշտոնանկությունն օրակարգային դարձրել: Մի քանի ենթադրյալ պատճառներից մեկն էլ կարող էր լինել վերջին մեկ տարում համայնքապետարանում իրականացված ստուգումների արդյունքները, ինչի վերաբերյալ հրապարակային խոսք գրեթե չասվեց (բացի համայնքապետարանում իրականացված հիմնանորոգման վերաբերյալ հրապարակումից):

Բայց կա իրավական մի հանգամանք, որ թույլ չէր տալիս Վաչագան Ադունցին պաշտոնանկ անել մինչեւ ս.թ. նոյեմբեր ամիս: Ըստ գործող օրենսդրության՝ պաշտոնավարման առաջին տարում չի կարելի պաշտոնանկ անել ընտրյալ համայնքապետին: Ասել է թե՝ նրան հիմա պաշտոնանկ անելու համար մի ճանապարհ կար միայն՝ հրաժարականի դիմում

կորզել, ինչպես եւ արվեց:

Կկարողանա՞ր Վաչագան Ադունցը հրաժարվել դիմում գրելուց: Իհարկե կարող էր, մանավանդ որ գորիսյան հանրությունը նրան ընդունում էր, մանավանդ որ նրան սատարում էր համայնքի ավագանին: Բայց գրեց…

Միգուցե հիշեցրել են նաեւ, որ ինքը կորցնելու բան ունի, թեեւ պիտի իմանար պարզագույն բանաձեւը՝ եթե կորցնելու բան ունես, ապա հրաժարականից հետո ավելի սրընթաց է իրականացվում այդ գործընթացը. խաղի ուրիշ կանոն չկա մեզանում:

Ստեղծված իրավիճակում մեզ առավելապես զարմացնում, նույնիսկ վախեցնում են մարդիկ, ովքեր Գորիսում տեղի ունեցածը համարում են ինչ-որ մեկի հաղթանակը կամ Վաչագան Ադունցի պարտությունը:

Դատեցեք ինքներդ՝ մեկ տարի առաջ իշխող ՀՀԿ-ի կողմից բուռն ծափահարություններով համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրված եւ հազարավորների կողմից ընտրված, սահմանադրությամբ ամրագրված կարգավիճակով անձնավորությանը պաշտոնանկ ենք անում՝ չնշելով գոնե մեկ պատճառ, եւ դա ինչ-որ անհայրենիք, անժողովուրդ մեկի հաղթանակը համարում՝ չհասկանալով, չգիտակցելով, որ դա պարտություն է, բոլորիս պարտությունը…

Մեր հանդիմանական խոսքերը, նախատինքը սակայն չեն կարող խանգարել ասելու՝ հազարավոր գորիսեցիների անունից շնորհակալություն Վաչագան Ադունցին՝ Գորիսի քաղաքապետի, ապա Գորիս խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնում մոտ երեք տարի մեր նոր պետությանն ազնվորեն ծառայելու համար: Վստահ ենք, որ նա, շնորհիվ իր գիտելիքների եւ կազմակերպչական ունակությունների, այսուհետ եւս պահանջված է լինելու մեզանում: Նա եղել եւ մնում է Գորիսի արժանավոր զավակներից մեկը:

Հ.Գ.

Սեպտեմբերի 11-ին տեղի է ունեցել Գորիս համայնքի ավագանու նիստը եւ ի գիտություն ընդունել Վաչագան Ադունցի հրաժարականի դիմումը: Ավագանին բարձր է գնահատել Վաչագան Ադունցի գործունեությունը Գորիս համայնքի ղեկավարի պաշտոնում եւ նրան շնորհակալություն հայտնել հարազատ բնօրրանին անբասիր ծառայելու համար:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Վահե Հակոբյանը ստել է. հայտարարագրում նշված տեղեկությունները եւ նրա ֆինանսական հոսքերն իրար չեն համընկնում, ինչը վկայում է հնարավոր կոռուպցիայի առկայության մասին

Սույն հոդվածում մենք ուսումնասիրում ենք Վահե Հակոբյանի եւ նրա տիկնոջ եկամտի հաշվետվությունները, ինչպես նաեւ հրապարակայնորեն հասանելի այլ տվյալներ, ինչը բերում է հետաքրքիր բացահայտումների՝ սխալ տեղեկատվություն, դրամական միջոցների մասին տեղեկության չհամընկնում, հնարավոր կոռուպցիա:

1) Երբ համադրում ենք 2016 թ. հունվարի 1-ի եւ 2016 թ. հոկտեմբերի 21-ի տվյալները՝ ներառյալ ձեռքբերումները, օտարումները եւ ֆինանսական շարժը, ստացվում է առնվազն 5 մլն դրամի տարբերություն: Ստորեւ աղյուսակում ներկայացված են հայտարարագրում նշված գումարները, որին ավելացվում են ստացված եկամուտները (աշխատավարձ, վարկ) եւ նվազեցվել են ձեռքբերված գույքի (բնակարան Իսպանիայում եւ ավտոմեքենա) ձեռքբերման գինն ու տրված փոխառությունները: Եթե ընդունենք, որ Վահե Հակոբյանը չի սնվել, չի հագնվել, չի ճամփորդել, որեւէ այլ ծախս չի ունեցել, միեւնույն է, ստացված արդյունքն առվնազն 5 մլն դրամով ավելի քիչ է, քան հոկտեմբերի 21-ին հայտարարագրված մնացորդը:

2) Հիմա անդրադառնանք Վահե Հակոբյանի անշարժ գույքին: Հայտարարագրում Վահե Հակոբյանը պաշտոնը զբաղեցնելիս ու տարեվերջին հայտարարագրել է երկու անշարժ գույք՝ բնակարան Իսպանիայում ու հողամաս: Եվ վերջինը, ըստ հայտարարագրի, պաշտոնը զբաղեցնելուց հետո վաճառել է: Այնինչ, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին ուղղված մեր հարցմանն ի պատասխան ստացանք պատասխան առ այն, որ 2017թ. հուլիսի 11-ի դրությամբ Ղափանցյան փողոց 95/3 հասցեով հողատարածքը՝ գնված 31 հուլիսի 2015 թվականին, դեռ նրան է պատկանում, եւ հետեւապես 2016թ. ընթացքում դա չի վաճառվել: Իսկ դա նշանակում է, որ եւ 2016թ. տարեվերջյան հայտարարագրում, եւ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածության համար հանձնած հայտարարագրում նա ստել է (այստեղ պետք է ուշադրություն դարձնել, որ 3 տարբեր նկարները շատ մանրակրկիտ նկարագրված են որպես 1 ջրանկար, 1 յուղանկար ու 1 նկար):

	Դրամ	Դոլար	Եվրո	Մեկնաբանություններ
Մնացորդը 01/01/2016՝ ըստ հայտարարագրի	21,000,000	285,000$	205,000€	
Մուտք: Ստացված աշխատավարձեր՝ ըստ հայտարարագրի	99,066,128			
Մուտք: Վարկ՝ ըստ հայտարարագրի			192,000€	
Ելք: Տրված փոխառություններ՝ ըստ հայտարարագրի	-94,761,000	-50,000$		
Ելք: Բնակարանի ձեռք բերում Իսպանիայում՝ ըստ հայտարարագրի			-275,875€	
Ելք: Լեքսուս մեքենայի ձեռք բերում՝ ըստ հայտարարագրի	-15,809,800			Մեքենան ձեռք է բերվել 2.74մլն. ռուբլի արժեքով: Ներկայացված է դրամային համարժեքը (ՀՀ դրամ/ռուբլի=5.8 ամենաշահեկան փոխարժեքով):
Հաշիվների միջև շարժ	20,406,675	-40,000$	-1,125€	Դրամային արտահայտությամբ արտարժութային շարժերը արտացոլելու նպատակով օգտագործվել են 2016-ին հրապարակված ամենաշահեկան փոխարժեքները (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար = 496.11, ՀՀ դրամ/Եվրո= 518):
Անհրաժեշտ հավելյալ եկամուտ (հաշվեկշռային գումար)	5,097,997			Չհայտարարագրված եկամուտը հաշվարկվել է՝ վերջնական մնացորդից հանելով սկզբնական մնացորդը, մոտքերը և ավելացնելով հայտարարագրված ելքերը:
Մնացորդը 21/10/2016՝ ըստ հայտարարագրի	35,000,000	195,000$	120,000€	

3) Հիմա 1-ին կետում բերված նույն հաշվարկը կատարենք ամբողջ տարվա համար (1-ին կետում հաշվարկվել էր տարեսկզբից մինչեւ հոկտեմբերի 21 եւ միայն Վահե Հակոբյանի համար), իհարկե հաշվի առնելով, որ 2016 թվականի ընթացքում նա 55 մլն դրամով չի օտարել անշարժ գույք, ինչպես որ ինքն է պնդում իր հայտարարագրում, եւ ինչը հերքվում է կադաստրի տեղեկատվությամբ: Արդյունքում ստացվում է, որ Հակոբյան-Պետրոսյան ընտանիքի ամբողջ տարվա մեջ չհայտարարագրվող ծախսերը կազմել են 17.8 մլն ՀՀ դրամ: Բավականին մեծ գումար՝ հաշվի առնելով ՀՀ միջին աշխատավարձը եւ ընտանիքների մեծամասնության տարեկան բյուջեները:Սակայն այստեղ նույնպես տեղ է գտնում ակնհայտ անհամապատասխանություն, այն է՝ սուտ: Նրանք այդ գումարի մեջ պետք է տեղավորեին՝ 1) տան գնման նպատակով դեպի Իսպանիա ճանապարհորդություններն ու տան միջնորդավճարները, 2) Իսպանիայի տան կահավորումը, 3) մեքենայի գնման նպատակով դեպի Ռուսաստան ճանապարհորդությունը, 4) Տերյան 50 շենքի 22/2 հասցեով տան շինարարական աշխատանքների վճարները (մանրամասները՝ ստորեւ), 5) բազմակի այլ ճանապարհորդությունները եւ 6) առօրյա ու այլ ծախսերը:

Վահե Հակոբյանի կնոջ Արտյոմ Արտակի Չաքմիշյանը 2016թ. փետրվարի 6-ին նվիրել է Տերյան փողոց 50 շենքի 22/2 բնակարանը, եւ 2016թ. ընթացքում նրանք նախաձեռնել ու կառուցել են ձեղնահարկ: Դա Երեւանի Կենտրոնի թաղապետարանի դիմացի շենքն է, որը շատերը նկատած կլինեն:

Նույնիսկ ամենահամեստ հաշվարկներով տվյալ հարկի շինարարական աշխատանքների գինը չէր կարող 20 մլն դրամից նվազ լինել (ինչը պետք է բացառել 5 հատ 8մլն դրամը գերազանցող ժամացույց եւ Այվազովսկու բնօրինակ նկար ունեցող անձի դեպքում):

	Դրամ	Դոլար	Եվրո	Մեկնաբանություններ
Մնացորդը 01/01/2016՝ ըստ հայտարարագրի	21,000,000	405,000$	225,000€	
Մուտք: Ստացված աշխատավարձեր՝ ըստ հայտարարագրի	141,510,119			
Մուտք: Վարկ՝ ըստ հայտարարագրի			192,000€	
Ելք: Տրված փոխառություններ ըստ հայտարարագրի	-112,761,000	-50,000$		
Ելք: Բնակարանի ձեռք բերում Իսպանիայում ըստ հայտարարագրի			-275,875€	
Ելք: Լեքսուս մեքենայի ձեռք բերում ըստ հայտարարագրի	-15,809,800			Մեքենան ձեռք է բերվել 2.74մլն ռուբլի արժեքով: Ներկայացված է դրամային համարժեքը (ՀՀ դրամ/ռուբլի=5.8 ամենաշահեկան փոխարժեքով):
Ելք: ժամացույցի գնում ըստ հայտարարագրի	-11,000,000			
Հաշիվների միջև շարժ	31,002,370	-42,000$	-19,625€	Դրամային արտահայտությամբ արտարժույթային շարժերը արտացոլելու նպատակով օգտագործվել են 2016-ին հրապարակված ամենաշահեկան փոխարժեքները (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար = 496.11, ՀՀ դրամ/Եվրո= 518):
Տարեկան ծախս (հաշվեկշռային գումար)	-17,841,689			Տարեկան ծախսը հաշվարկվել է՝ վերջնական մնացորդից հանելով սկզբնական մնացորդը, մուտքերը և ավելացնելով հայտարարագրված ելքերը
Մնացորդը 31/12/2016՝ ըստ հայտարարագրի	36,100,000	313,000$	121,500€	

Նույնիսկ միայն այդ գումարը չի տեղավորվում 17.8մլն դրամի մեջ, որքանից ավելին չպետք է ծախսած լինեին 2016թ.: Այդ ամենը հաշվի առնելով՝ հիմնավոր կասկածներ են առաջանում չհայտարագրված եկամուտների առկայության վերաբերյալ, հետեւաբար հիմք ունենք պնդել, որ առկա է կոռուպցիա:

4) Բազմիցս գրվել է, որ մարզպետն ուղղաթիռով է տեղաշարժվում: Մարզպետարանի պաշտոնական պատասխանով տեղեկացվում է, որ ուղղաթիռի համար վճարում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ԶՊՄԿ): Իհարկե, մարզպետը պնդում է նաեւ, որ օգտվում է ուղղաթիռից աշխատանքային գրաֆիկի համընկնման դեպքում: Սակայն, գոնե սեպտեմբերի 6-ին ուղղաթիռի կանգառը քաղաք Սիսիանում կատարվել է անձամբ մարզպետի համար: Ավելին, նույնիսկ գրաֆիկի համընկնումը որակապես բան չէր փոխի, քանզի նրան այդ առավելությունը տրվում է ըստ պաշտոնի: Ուղղաթիռի մեկ ուղղությամբ Երեւան-Կապան թռիչքն արժե 750.000 դրամ: Իմ հաշվարկով՝ մարզպետն առնվազն 7 անգամ օգտվել է այդ ծառայությունից: Այսինքն, մարզպետին տրամադրվել է առնվազն 5.250.000 դրամի ծառայություն: Ավելին, մարզպետը Սյունիքի մարզում բնակվում է ԶՊՄԿ-ին պատկանող պանսիոնատում: Պանսիոնատ, որը փակ է հանրության համար: Ու վերոնշյալը հաշվի առնելով՝ ակնհայտ է կոռուպցիոն ռիսկերի առկայությունը: Մասնավոր ընկերությունը մարզպետին ակնհայտորեն առավելություն է տրամադրում, որի արդյունքում առնվազն էականորեն բարելավվել է մարզպետի անձնական իրավիճակը:

5) «Սյունյաց երկրի» աղբյուրից տեղեկացա՝ մարզպետը սեպտեմբերի 6-ին հայտարարել է, որ Սիսիանի համայնքապետի թեկնածու Արթուր Սարգսյանի թիկունքին ԶՊՄԿ-ն է: ԶՊՄԿ-ի կողմից պաշտոնապես չհերքման պարագայում, ու իմանալով մարզպետի՝ նախկինում ԶՊՄԿ-ում բարձր պաշտոն զբաղեցնելու փաստը, կարելի է հիմնավոր ենթադրությունը անել, որ ասվածը համապատասխանում է իրականությանը:

6) 2017թ. մայիսի 31-ի դրությամբ մարզպետն ու նրա նոր կինը դարձել են տխրահռչակ Դեմիրճյան 1 հասցեում 2 բնակարանի (176 ք/մ բնակարան N3 ու 133 ք/մ բնակարան N34) եւ 3 ավտոկայանատեղերի (N28, N29 ու N37) սեփականատեր: Սեփականություն, որի արժեքը մոտավոր գնահատականով 250մլն դրամ է, ու ինչը գնված է հիփոթեքով: Հիփոթեքով. ու այստեղ ժամանակն է հիշել «Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» ՓԲԸ-ն, որտեղ Վահե Հակոբյանին էր պատկանում 10% մասնաբաժին, նա զգալի աշխատավարձ էր ստանում: Ընկերություն, որն անհասկանալի գործառույթ էր իրականացնում, ու առանց որի առկայության մինչ այդ ողջ արժեքի ստեղծման շղթան աշխատում էր: Սա այն ընկերությունն է, որը, էական շահութահարկ չվճարելով (առավելագույն հնարավորը՝ 2015թ. 22մլն դրամ, 2014թ՝ 3մլն դրամ), զգալի եկամտային հարկ էր վճարում (2015թ՝ 306մլն դրամ, 2014թ՝ 169մլն դրամ): Այս ամենի նպատակահարմարությունը խնդրահարույց էր, քանզի ՀՀ-ում եկամտային հարկի դրույքն ավելի բարձր է, քան շահութահարկինը: Առաջին հայացքից ոչ խելամիտ գործունեությունը միանգամից իմաստավորվում է, երբ հաշվի ենք առնում հիփոթեքը. ՀՀ-ում կառուցապատողից հիփոթեքով գնված անշարժ գույքի տոկոսները փոխհատուցվում են վճարված եկամտային հարկի չափով: Այսինքն, պետությունը ոչինչ չի ստանում, մի կողմից եկամտային հարկ է վճարվում, մյուս կողմից հետ ստացվում՝ որպես հիփոթեքի տոկոսների փոխհատուցում:

ԱՐԹՈՒՐ ՕՐԲԵԼՅԱՆ

Սիսիանի գործող քաղաքապետի մրցակիցը կլինի Սիսիանի երիտասարդության լիդերներից մեկը՝ Կարեն Համբարձումյանը

Կիրակի օրը՝ սեպտեմբերի 10-ին, «Սյունյաց երկիր» թերթը հարցախույզ է անցկացրել Սիսիանում՝ խոշորացվող համայնքի ղեկավարի հնարավոր թեկնածուների վերաբերյալ:

Հարցվածներն առանց բացառության համոզված են, որ նոյեմբերի 5-ին ընտրություններին իր թեկնածությունը կառաջադրի Սիսիանի գործող քաղաքապետ Արթուր Սարգսյանը:

Հարցվածները, գրեթե նույն վստահությամբ, հայտարարում են, որ Սիսիան բազմաբնակավայր համայնքի ղեկավարի թեկնածու կառաջադրվի նաեւ 1982թ. ծնված, ԲՀԿ-ական Կարեն Համբարձումյանը, ով ներկայումս աշխատում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում՝ Իրան-Հայաստան 400կվ երրորդ օդային գծի ծրագրերի իրականացման չորրորդ բաժնի պետ:

Ամենայն հավանականությամբ հենց նրանց միջեւ էլ տեղի կունենա մրցապայքարը համայնքի ղեկավարի աթոռի համար:

Ի՞նչ առավելություններ եւ թերություններ ունեն համայնքի ղեկավարի նշված թեկնածուները՝ ըստ սիսիանցիների:

Պնդում են, որ Կարեն Համբարձումյանը տարածաշրջանի երիտասարդության թեկնածուն է, որ երիտասարդներն են նրան առաջարկում ու հորդորում՝ անպայման առաջադրվել՝ Սիսիանը ստեղծված վիճակից հանելու, Սիսիանի ոտնահարվող արժանապատվությունը վերականգնելու համար: Ասում են նաեւ՝ Կարեն Համբարձումյանն ուղղամիտ, շիտակ, ազնիվ, կազմակերպչական ունակություններով օժտված, Սիսիանի տարածաշրջանը լավագույնս ճանաչող, տարածաշրջանի հիմնախնդիրներին քաջատեղյակ, հանրության մեջ պատշաճ հեղինակություն վայելող երիտասարդ է, ում խոսքի եւ գործի միջեւ սովորաբար տարբերություն չկա:

Ըստ հարցվածների՝ գործող քաղաքապետ Արթուր Սարգսյանը, քանի դեռ ժամանակ կա, պետք է հանրությանը կետ առ կետ ներկայացնի, թե անցած մեկ տարվա ընթացքում կոնկրետ ինչ աշխատանքներ է կատարել նախընտրական ծրագրից եւ տրված խոստումներից, ինչ չի կատարել եւ ինչու չի կատարել:

Հարցվածները զայրույթով են վերաբերվում Սյունիքի մարզպետի աթոռը զբաղեցնող անձնավորության հայտարարությանն այն մասին, որ Արթուր Սարգսյանի թիկունքին Քաջարանի կոմբինատն է: Հատկապես Սիսիանի հետ որեւէ առնչություն չունեցող, սիսիանցիներին ապրիլի 2-ի առիթով բազում խոստումներ տված եւ չկատարած Վահե Հակոբյանի խոսքը գուցե եւ գրոշի արժեք ունենար, եթե անցած մեկ տարում Քաջարանի կոմբինատն ինչ-որ երեւելի գործ կատարած լիներ Սիսիանում:

Հարցվածները ոչ բարոյական ու պատշաճ են համարում գործող քաղաքապետի եւ նրա մերձավորների պահվածքը՝ տեղի-անտեղի, առիթ-անառիթ ՀՀ նախագահի բարձր անվան շահարկումը:

Ի դեպ, Արթուր Սարգսյանի հավանական մրցակիցը՝ Կարեն Համբարձումյանը, Հովհաննես Համբարձումյանի որդին է, Աղասի Հակոբջանյանի դստեր ամուսինը, ինչը նշանակում է (մեծ հաշվով), որ այս անգամ նույնպես Սիսիանում ընտրապայքարը կընթանա երկու հայտնի գերդաստանի միջեւ, բայց մի էական տարբերությամբ՝ Սիսիանի երիտասարդության զգալի մասը (ինչպես վկայում են տեղացիները) Կարեն Համբարձումյանի թիկունքին է: Ասել է թե՝ Արթուր Սարգսյանի թիկունքին Քաջարանի կոմբինատն է, Կարեն Համբարձումյանի թիկունքին՝ նախեւառաջ ու գլխավորապես Սիսիանի երիտասարդությունը: Իսկ դա առաջիկա ընտրապայքարի առանցքում դնում է կարեւոր մի հարց՝ նոյեմբերի 5-ին ովքե՞ր պետք է ընտրեն Սիսիան համայնքի ղեկավար՝ սիսիանցինե՞րը, թե՞ ինչ-որ օտարականներ՝ հանրությանն անհայտ կենսագրությամբ, կասկածելի զբաղմունքով եւ Սյունիքի ունեցվածքով երկու-երեք տարում բիրդան աղա դարձած:

Չի բացառվում, այդ բոլորով հանդերձ, որ համայնքի ղեկավարի նոր թեկնածուներ եւս կլինեն, քանի որ առաջադրումներն առջեւում են, իսկ ուժերի վերադասավորումը շարունակվում է...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մեզ եւ ձեզ՝ մեծ ավետիս. մարզպետի երջանկաբեր ուղղաթիռն այս անգամ վայրէջք կատարեց Սիսիանում՝ մարդկանց պարգեւելով ապահով ու երջանիկ ապրելու հեռանկար

Ըստ Սիսիանից ստացված տեղեկությունների՝ սեպտեմբերի 6-ին Սյունիքի մարզպետի ուղղաթիռը վայրէջք կատարեց Սիսիանում. մարզպետին իջեցնելուց հետո թռչող սարքն ուղեւորվել է Կապան՝ այնտեղ սպասելու Վահե Հակոբյանին:

Ուղղաթիռն այս անգամ, ի տարբերություն նախորդ նման սավառնումների, մարզկենտրոնի օդակայանում վայրէջք կատարելուց առաջ անհարկի պտույտներ է կատարել Կապանի երկնակամարում՝ ի հեճուկս բոլոր նրանց, ովքեր արտառոցություն են համարում մարզպետի օդային ոստոստյունները: Այնպես որ՝ խոսեք, դատապարտեք, քննադատեք՝ որքան ուզում եք, մարզպետը (բոլորիդ ջիգրու) ուղղաթիռով է աշխատանքի գալու...

Ինչեւէ, Նորավանի մանկապարտեզի վերաբացմանը մասնակցելուց հետո Վահե Հակոբյանը Սիսիանում հանդիպել է տարածաշրջանի համայնքների ղեկավարների հետ: Նպատակը մեկն էր՝ ցույց տալ, որ ինքը դեռ կա եւ նժույգի վրա է: Եվ, օգտվելով առիթից, կոչ արեց հավաքվածներին՝ նոյեմբերի 5-ի ընտրություններին քվեարկել Սիսիանի գործող քաղաքապետ Արթուր Սարգսյանի օգտին, քանի որ նա, ըստ մարզպետի, «մեր թըմի անդամ է» (երեւի թիմ բառը նկատի ուներ, որ այդպես էլ (վարժանքներից հետո անգամ) չի կարողանում ճիշտ արտաբերել): Մարզպետը, սակայն, չի վերծանել, թե ինչ ասել է «մեր թըմ»: Փոխարենը հավաստիացրել է, որ Արթուր Սարգսյանի թիկունքին Զանգեզուրի պղնձամոլիբդենայինն է...

Ընտրությունները պաշտոնապես չեն մեկնարկել դեռեւս, ՀՀԿ-ն որոշում չի ընդունել իր հավանական թեկնածուի վերաբերյալ, համայնքի ղեկավարի թեկնածուներ չեն առաջադրվել, քարոզարշավի մասին խոսք չկա, իսկ մարզպետը քարոզի է դուրս եկել...

Բայց սա միակ տարօրինակությունը չէր, որ արձանագրվեց խորհրդակցությունում:

Ճիշտն ասած բոլորին, նաեւ մեզ, մինչեւ այժմ թվում էր, թե Արթուր Սարգսյանի թիկունքին սիսիանցի ընտրողներն են, Հայաստանի հանրապետական կուսակցությունն է...

Հիմա էլ պարզվում է՝ Քաջարանի կոմբինատն է: Ասել է թե՝ Արթուր Սարգսյանի օգտին սիսիանցի ընտրողը պետք է քվեարկի նախեւառաջ այն բանի համար, որ կոմբինատի օտար ու կասկածելի ղեկավարները (Սյունիքի եւ հատկապես Սիսիանի հետ հեռավոր աղերս անգամ չունեցող) նրան աջակցում են:

Իսկապես, ի՞նչ կապ ունի Գերմանիայի Դաշնային Հանրապետության սեփականություն հանդիսացող Քաջարանի կոմբինատը Հայաստանի Հանրապետության Սիսիան համայնքի ղեկավարի ընտրության հետ: Ժամանակը չէ՞ արդյոք այդ հարցն ուղղելու Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի արտակարգ եւ լիազոր դեսպանին:

Մյուս կողմից՝ իսկապե՞ս Սիսիանը մեկ տարի շարունակ ղեկավարած Արթուր Սարգսյանը՝ պատգամավոր եղբայրով, երեք անգամ Սիսիանի քաղաքապետ նշանակված նախնիով, Քաջարանի կոմբինատի զորակցության կարիքն ունի այսօր:

Ի վերջո՝ խե՜ղճ հանքագործներ, իրենց հոգսը թողած ո՞ր մեկի թիկունքին կանգնեն՝ Վահեի՞, Միեր անհայտի՞, էլիզաբեթ տանիքի՞, Զարուհի ծպտյալի՞, թիկնապահների՞, ուղղաթիռի՞, շների՞... Հիմա էլ՝ Արթուր Սարգսյանի, այն էլ՝ իրենց հետ որեւէ կապ չունեցող Սիսիանում:

Ներկայացումը, այդուհանդերձ, գուցե եւ կայացած համարվեր, եթե մարզպետն ու քաղաքապետը նախընտրական խոստումներ տալուց առաջ գոնե հակիրճ ներկայացնեին, թե նախորդ խոստումներից որ մեկն են կատարել, որ մեկը՝ ոչ:

Իրավիճակը չփրկեց նույնիսկ մարզպետի հորդորը համայնքների ղեկավարներին՝ գրավոր առաջարկություններ ներկայացնել, թե ինչ պիտի արվեն տարածաշրջանի բնակավայրերում:

Այդ առիթով հարկ ենք համարում մի անկեղծ խորհուրդ հղել համայնքների ղեկավարներին՝ հնարավորինս արագ ներկայացրեք պահանջվող առաջարկությունները եւ հետամուտ եղեք, որ մարզպետը դրանք ի կատար ածի մինչեւ նոյեմբերի 5-ը, այլապես չի կատարելու, այլապես խաբելու է, ինչպես խոստացել ու չի կատարել մինչեւ հիմա տված խոստումների մեծագույն մասը:

Սիսիանյան խորհրդակցության ամենաուշագրավ դրվագը, վերն ասվածով հանդերձ, այն էր, որ Վահե Հակոբյանը համայնքի ղեկավարների հետ խորհրդակցելիս խոսում էր ոչ թե մարզպետի, մարզպետարանի պետական դիրքերից, այլ՝ Քաջարանի կոմբինատի պատուհանից:

Եվ ներկաները, ինչպես եւ սպասվում էր, խորհրդակցությունից հետո միմյանց հարցնում էին՝ չլինի՞ թե ինքն էլ հաշտվել է իր՝ ժամանակավոր ֆիգուր լինելու կարգավիճակին, չլինի՞ թե ինքն էլ գիտի, որ Սիսիանում ե՛ւ իրեն, ե՛ւ մերօրյա մարզպետարանին շուլուխով են վերաբերվում:

Դե ինչ, հաջողություններ՝ Քաջարանի կոմբինատին՝ Սիսիան խոշորացվող համայնքի ղեկավարի ընտրության հարցում, այլապես պրոֆիլակտորիայում Վահե Հակոբյանի համար բազում համեմունքներով փլավ եփող չի գտնվի Սյունիքում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Լեոնիդ Գրիգորյան. «Հպարտությամբ եմ մտել բանակ եւ նույնպիսի հպարտությամբ էլ հրաժեշտ եմ տալիս, բայց միշտ կանգնած կլինեմ հայոց ազգային բանակի շարքերում»

էջ 1

քանի որ այլ թափուր հաստիք այդ պահին չկար, այնուհետեւ նույն գնդում նշանակվեցի ավտոմոբիլային դասակի հրամանատար: Գերմանիայում ծառայության ժամկետն ավարտելուց հետո՝ 1988թ. հոկտեմբերին, տեղափոխվեցի Լենինգրադի զինվորական օկրուգ, որտեղից գործուղվեցի Լենինգրադ քաղաքից քիչ հեռու՝ Սապյոռնայա զինվորական ավան, որտեղ տեղակայված էր ԽՍՀՄ զորքերի 44-րդ հետեւակային դիվիզիան, եւ նշանակվեցի դիվիզիայի զենիթահրետանային գնդի ռադիոլոկացիոն կայանի պետի պաշտոնում: Նշված գնդում ծառայելու կարճ ժամանակաընթացքում, բացի պաշտոնեական պարտականություններից, ինձ վրա դրվեցին մի քանի այլ պարտականություններ եւս, որոնք կատարում էի պատշաճ մակարդակով: Այս ամենից ելնելով՝ հեղինակություն ձեռք բերեցի բարձրաստիճան հրամանատարության շրջանում, որն էլ հիմք հանդիսացավ ծառայությանս 20-րդ օրն ինձ երեքսենյականոց բնակարանով ապահովելու համար, որն էլ համընկավ չարաբաստիկ Սպիտակի երկրաշարժի օրվան: Նույն օրը գնդի հրամանատարի առաջարկությամբ մեկնեցի Հայաստան՝ ընտանիքիս տեսակցելու եւ ընտանիքս ինձ հետ ծառայության վայր տեղափոխելու նպատակով: 1989թ. հունվարի սկզբին ընտանիքով վերադարձա՝ ծառայությունս շարունակելու՝ նույն բարձր պատասխանատվության զգացումով եւ եռանդով: Քանի որ ենթասպա էի եւ նշանակվում էի միայն այդ կոչմանը համապատասխան պաշտոններում, սակայն ինձ հանձնարարվում էին տարբեր սպայական պարտականություններ, որն էլ կատարում էի բարձր մակարդակով, գնդի հրամանատարի միջնորդությամբ զինվորական ուսումնարանում էքստեռն քննություններ հանձնեցի՝ սպայի կոչում ստանալու համար, որ այդ ժամանակ հազվադեպ երեւույթ էր:

Ծառայել եմ խորհրդային բանակում նվիրումով, պարտքի մեծ զգացումով, քանզի այնտեղ նախեւառաջ ներկայացնում էի իմ ազգային ինքնությունն ու հպարտությունը, որը եկել էր մեր պապերից ժառանգած հերոսական գեներից: Ծառայության ընթացքում հաճախակի արժանանում էի հրամանատարության խրախուսանքներին, սակայն հոգուս խորքում կար մի անհանգստություն՝ պայմանավորված հայրենիքում տիրող իրավիճակով: Իմ հայրենի բնօրրանը՝ Կապանը, աշխարհագրական դիրքից ելնելով, գտնվում էր ադրբեջանական տարածքներով սեպված մի վայրում, որտեղ ես վտանգված էի տեսնում իմ քաղաքի բնակչության ապագան: Երեւան-Կապան գնացքի ճանապարհահատվածի 90 եւ ավելի տոկոսն անցնում էր ադրբեջանական տարածքներով, եւ այդ ժամանակ ազերիները ոչ միայն խոչընդոտում էին երթեւեկությունը, այլեւ ջարդում գնացքները եւ պատանդ վերցնում ուղեւորներին: Դրան հաջորդեց մորս հեռախոսազանգը. «Բալա՛ս, ապրի՛ր այդտեղ, չվերադառնաս, այստեղ վտանգ կա»: Եվ այդ բառերից անմիջապես հետո գնացի գնդի շտաբ եւ զեկուցագիր ներկայացրի գնդի հրամանատարին իմ զորացրման վերաբերյալ: Նրանք հանկարծակիի եկան եւ հրաժարվում էին զեկուցագիրս վերցնելուց, քանզի, իրենց ասելով, իմ հանդեպ ցուցաբերված վերաբերմունքին ոչ բոլորն էին արժանանում: Առաջարկեցին ավելի հեռանկարային ծառայություններ եւ արտոնություններ, սակայն հրաժարվեցի, եւ արդեն հինգերորդ զեկուցագրից հետո զորացրման համաձայնություն տվեցին: Հայրենիքում տիրող իրավիճակից ելնելով՝ վերցրի կնոջս ու երկու զավակիս եւ վերադարձա:

- Եվ, այնուամենայնիվ, զինվորական Լեոնիդ Գրիգորյանը՝ որպես մարտական հրամանատար, ձեւավորվել է Արցախյան պատերազմում:

- Բնականաբար, Արցախյան պատերազմը վերջնականապես ձեւավորեց զինվորական Լեոնիդ Գրիգորյանին: Երկու գումարտակ եմ ղեկավարել՝ ՆԳ պահպանության Կապանի բաժնին կից կազմավորված այլընտրանքային հրաձգային գումարտակը, որտեղ ի պաշտոնե դասակի հրամանատար էի, բայց քանի որ գումարտակի միակ սպան էի, կատարում էի նաեւ գումարտակի հրամանատարի պարտականությունները: Մեկուկես տարի զինվորական ծառայությունն ավարտելուց հետո ՀՀ-ում գործում էր պաշտպանության նախարարությունը, եւ իմ զորացրված որոշ զինվորների հետ տեղափոխվեցի Կապանում տեղակայված ՀՀ ՊՆ 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադ, նշանակվեցի 1-ին գումարտակի շտաբի պետի տեղակալ, այնուհետեւ՝ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի հրամանով՝ բրիգադի առաջին գումարտակի հրամանատար: Սկզբնական շրջանում կազմակերպական աշխատանքները դժվարությամբ էին հունի մեջ մտնում, քանի որ ծառայությունը կազմակերպում էինք անփորձ եւ զինվորական կրթություն չունեցող մարդկանց հետ, բայց իրավիճակը դա էր, եւ դժվարությունից չէր կարելի թեւաթափ լինել, քանի որ առջեւում սպասվում էին ավելի լայնածավալ մարտական գործողություններ: Կարճ ժամանակամիջոցում կարողացա նրանց կանգնեցնել զինվորական ուղու վրա, ինչը նպաստեց ավելի արդյունավետ ծառայություն կազմակերպելուն, որի արդյունքը ողջ մարտական գործողությունների ընթացքում երկու գումարտակներից ունեցած սակավաթիվ կորուստներն էին: Իմ զինվորը գիտեր եւ, ինչպես ժամանակը ցույց տվեց, նաեւ ականատես եղավ իմ կյանքը հանուն նրա փրկության զոհաբերելուն: Ոչինչ եւ ոչ ոքի չեմ մոռացել, անցած ճանապարհովս հպարտանում եմ, այսօր ում աչքերի մեջ պետք է նայեմ, նրանից իմ հայացքը չեմ փախցնում, հիշում եմ բոլորին մեկ առ մեկ: 2006թ.-ից առ այսօր իմ գումարտակի զինվորների հետ ուխտագնացություն ենք կազմակերպում ամբողջ հանրապետության տարածքում՝ այցելելով մեր գումարտակից զոհվածների շիրիմներին, ինչպես նաեւ բարոյական աջակցություն ցուցաբերում նրանց ընտանիքի անդամներին:

Պատերազմի ժամանակ գումարտակի հրամանատար էի, զինադադարից հետո՝ բրիգադի հրամանատարի տեղակալ մարտական պատրաստության գծով. վարածս պաշտոնների դեպքում անմիջապես պատասխանատու էի յուրաքանչյուր զինվորի թե՛ մարտական, թե՛ բարոյահոգեբանական վիճակի համար: Հատկապես պատերազմի տարիներին մշտապես առաջնորդվել եմ «Դեպի առաջ», «Բոլորը մեկի համար, մեկը՝ բոլորի» սկզբունքներով: 1994թ. հունվարի 6-ից գումարտակս տեղափոխվեց մարտական գործողությունների գոտի: Իմ որոշմամբ՝ զինվորները, ովքեր ընդամենը 1-2 ամսվա մարտական փորձ ունեին, ռազմական գործողությունների մեջ պետք է մտնեին միայն կամավորության սկզբունքով: Չեղավ գեթ մեկը, ով առաջին գծում հայտնվելու ցանկություն չհայտներ: Շնորհիվ մարտական ոգու, հայրենիքին անմնացորդ նվիրվելու պատրաստակամության՝ գումարտակս տրված մարտական առաջադրանքը կատարեց պատվով՝ այդ պատերազմում հաղթանակ ձեռք բերելու գործում ունենալով նշանակալի ներդրում:

- Եվ զինվորական ծառայության տարիներից քանի՞սն եք անցկացրել որպես ՀՀ Կապանի զինվորական կոմիսար:

- 1996թ. հունվարի 26-ին Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հրամանով նշանակվեցի ՀՀ Կապանի զինվորական կոմիսար՝ բրիգադի հրամանատար, այժմ գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի միջնորդությամբ: Այդտեղ տեղափոխվեցի Կապանի բրիգադի հրամանատարի տեղակալի պաշտոնից, որ նշանակվել էի լեգենդար հրամանատար, Մեծ հայրենական եւ Արցախյան պատերազմներում փառավոր հաղթանակներ կերտած, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի առաջարկությամբ ու միջնորդությամբ: 1994թ. հունվարի 23-ին Հորադիզի մատույցներում ծանր վիրավորվելուց հետո մարտական գործողությունների գոտում երկար մնալու համար առողջական վիճակս չներեց, բայց մնացի այնտեղ այնքան ժամանակ, ինչքան հարկ համարեցին: Այդ պաշտոնը նոր ոլորտ էր ինձ համար, բայց կարճ ժամանակում ծանոթացա աշխատանքի բնույթին՝ կոլեկտիվիս աջակցության շնորհիվ արագ տիրապետելով պարտականություններիս: 21 եւ ավելի տարի վարել եմ այդ պաշտոնը, կատարել բոլոր պետական առաջադրանքները՝ անցկացնելով 43 զորակոչ, հինգ տասնյակից ավելի զորահավաքային միջոցառումներ, կատարել անթիվ հատուկ հանձնարարություններ, կարողացել հանրության շրջանում պատշաճ մակարդակով ներկայացնել զինվորական կոմիսարի դերը: Բացի պաշտոնեական պարտականություններից՝ հավելյալ բազում աշխատանքներ ենք իրականացրել՝ համագործակցելով հայկական եւ ռուսական զորամասերի, տարբեր հկ-ների եւ կազմակերպությունների հետ:

Առանձնահատուկ ուզում եմ նշել երջանկահիշատակ Շմավոն Մովսիսյանի հետ մեր ջերմ եւ բարիդրացիական հարաբերությունների մասին, ով հայրենասեր, իր գործին նվիրյալ անձնավորություն էր, սրտացավ՝ երկրի ու ժողովրդի ճակատագրի հանդեպ: Նրա հետ միասին թանգարանում ստեղծեցինք ռազմահայրենասիրական համալսարան, որտեղ հատուկ դասացուցակով եւ ծրագրով շաբաթական մեկ օր անց էինք կացնում դասընթացներ նախազորակոչային տարիքի երեխաների հետ՝ նպատակ ունենալով նրանց մեջ սերմանել հայրենասիրություն եւ սեր ռազմական գործի հանդեպ: Տարեկան մեկ անգամ երեխաներին տանում էինք ազատագրված տարածքների համապատասխան զորամասեր՝ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, զինվորների առօրյային, նիստուկացին ծանոթացնելու համար: Իմ նախաձեռնությամբ, նախկին պիոներական ճամբարների փոխարեն, առաջարկեցի կազմակերպել մեկշաբաթյա ռազմական ճամբար, որ իրականություն դարձավ Ռիտա Դավթյանի, Ռոմա Սարգսյանի, Սուրիկ Հարությունյանի անմիջական աջակցությամբ:

- Ինչո՞վ է պայմանավորված Ձեր պաշտոնաթողությունը:

- Պաշտոնաթողությունս պայմանավորված է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելով: Պաշտպանության նախարարի հրամանը եղել է օգոստոսի 15-ին: Համաձայն գործող օրենքի՝ ՀՀ զինված ուժերում փոխգնդապետները՝ 50, գնդապետները՝ 55, գեներալները՝ 60 տարեկանում անցնում են զինվորական կենսաթոշակի: Առհասարակ մեզ՝ ավելի երիտասարդներով փոխարինելու գործընթացին շատ դրական եմ վերաբերվում:

- Կապանի զինկոմ աշխատելու 21 եւ ավելի տարիների ընթացքում երեւի թե ամենապատասխանատու շրջանը համընկավ 2016թ. ապրիլյան առճակատման հետ:

- Իսկապես, 2016թ. ապրիլյան առճակատումը երեւի թե իմ, ինչպես նաեւ բոլորիս կյանքում ամենապատասխանատու պահերից էր: Տարիների ընթացքում տեսական պատրաստվածությունը վերածվեց գործնական քայլերի, երբ պետք է մոբիլիզացվեին բոլոր ուժերը: Չնայած մարտական թեժ գործողությունները տեւեցին չորս օր, բայց երկու ամիս շարունակ հերթափոխեր էինք կազմակերպում, զինվորական տարաբնույթ հանձնարարություններ կատարում, որ հակառակորդի հավանական հարձակմանը պատրաստ լինենք արժանի հակահարված տալու համար: Պետք է նշեմ, որ պատվով կատարեցինք այդ առաջադրանքները, եւ բավարարված եմ կատարածս աշխատանքով: Վերադասի տված հանձնարարությունները կատարել եմ որակով եւ ճիշտ ժամկետում: Նույնիսկ դիմել եմ հանրապետության զինկոմիսարիատ, որ թույլ տան ջոկատ ձեւավորել եւ մեկնել մարտական գործողությունների գոտի, բայց մերժել են: Այդ օրերին կատարած աշխատանքի համար արժանացել եմ ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանի եւ հանրապետության գլխավոր զինկոմ, գեներալ-մայոր Հենրիկ Մուրադյանի պատվոգրերին:

- Զինկոմի գործունեությունն անհնար է պատկերացնել առանց մարզային եւ համայնքային իշխանությունների, առանց տվյալ տարածաշրջանում գործող տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների հետ համագործակցության:

- Ինչպես արդեն նշեցի, տարիների ընթացքում բավականին լայնացրել ենք զինկոմիսարիատի համագործակցության շրջանակները: Առիթից օգտվելով՝ ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել բոլորին՝ Կապանա տան ողջ ազգաբնակչությանը՝ ծեր թե մանուկ, կին թե տղամարդ… Աշխատել ենք մարզպետարանի, համայնքապետարանների, մարզի դատախազության, ոստիկանության վարչության եւ Կապանի բաժնի, Կապանի բժշկական կենտրոնի, տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների, մանկապարտեզների, դպրոցների, ուսումնական այլ հաստատությունների եւ կազմակերպությունների հետ: Ջերմ, բարիդրացիական հարաբերություններ ենք հաստատել վերոնշյալ բոլոր հաստատությունների ղեկավարների հետ՝ նախեւառաջ հաշվի առնելով ազգաբնակչության անվտանգության համար պատասխանատու պաշտոն զբաղեցնելու կարեւոր հանգամանքը: Շնորհակալ եմ նաեւ Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի կոլեկտիվին՝ տնօրեն Կամո Արզումանյանի գլխավորությամբ, որ միշտ բանակի կողքին է: Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Զանգեզուրի պղնձամոլիբդենային, Կապանի լեռնահարստացման կոմբինատների՝ մինչ օրս եղած եւ գործող տնօրեններին, ովքեր մշտապես աջակցել են զինկոմիսարիատին թե՛ զորավարժության, թե՛ պատերազմի ժամանակ՝ գիտակցելով, որ բոլորիս համար թիվ մեկ խնդիրը երկրի անվտանգությունն ու պաշտպանությունն է: Շնորհակալություն Կապանի բժշկական կենտրոնին, հանձին նախկին տնօրեն Սմբատ Օրբելյանի, ով թե՛ պատերազմի տարիներին, թե՛ խաղաղ ժամանակ մշտապես մեր կողքին էր:

Ապրիլյան քառօրյա գործողությունների ժամանակ զինկոմիսարիատը վեր էր ածվել շտաբի, եւ չկար մի հիմնարկ-ձեռնարկության, ուժային կառույցի ղեկավար, ով իր հնարավորությունների սահմաններում մեզ չաջակցեր: Երախտապարտ եմ Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, որոնց ոգով տոգորված՝ հերթական հաղթանակը կերտեցինք, մարտական ընկերներիս, որոնց հետ փառապանծ ճանապարհ ենք անցել: Եվ վերջում՝ առանձնահատուկ շնորհակալությունս Կապանի տարածաշրջանում գործող զանգվածային լրատվամիջոցներին, առանց որոնց հնարավոր չէր հասարակությանն ի ցույց դնել մեր աշխատանքները:

Մի խոսքով՝ բոլորս միասին արել ենք ամեն բան հնարավոր մարտական գործողությունների ժամանակ բնակչությանը զգոն եւ պատրաստ պահելու համար:

- Որպես զինկոմ՝ ի՞նչ ժառանգություն եք թողնում Ձեզ փոխարինողին եւ ի՞նչ խորհուրդ կտաք նրան:

- 1996թ. ինչպիսի ավանդույթներ ստացել եմ իմ նախորդ զինկոմից՝ Վալերի Քոչարյանից, պահել-պահպանել եմ առ այսօր եւ հնարավորինս ավելացրել, աշխատանքային տարբեր հարաբերություններ հաստատել, համագործակցության շրջանակներն ընդլայնել: Իմ եւ ծառայակիցներիս աշխատանքային ոճն առ այսօր մեր պլան

Դարբաս. միջնակարգ դպրոցի ընտրված տնօրենի հետ մարզպետարանը հրաժարվում է կնքել աշխատանքային պայմանագիր

Սեպտեմբերի 11-ին «Դարբասի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում անց է կացվել տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ, որի օրինական արդյունքները, հակառակ կառավարության սահմանած կարգի, անտեսում է Սյունիքի մարզպետարանը:

Նախկին տնօրեն Վալերիկ Օհանյանը տարիքի եւ աշխատանքային պայմանագրով սահմանված ժամկետը լրանալու պատճառով այլեւս չէր կարող պաշտոնավարել:

Տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին հայտ էին ներկայացրել Ռուբեն Զաքարյանը («Շենաթաղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն), Տիգրան Սանթրյանը (Դարբասի միջն. դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ) եւ Վարդիկ Սանթրյանը (Դարբասի միջն. դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի):

Խորհրդի նիստը, որ կոչված էր անցկացնելու մրցույթը, իրավազոր էր. խորհրդի ութ անդամն էլ մասնակցում էին նիստին:

Ներկա էր նաեւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ներկայացուցիչը՝ Սիսիանի ավագ դպրոցի տնօրեն Նաիրա Ներսիսյանը:

Մրցույթի նախապատրաստումն ու անցկացումը լիովին համահունչ էին ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» N319-Ն որոշման դրույթներին: Այդ մասին հավաստիացրին ե՛ւ նախարարության ներկայացուցիչ Նաիրա Ներսիսյանը, ե՛ւ կառավարման խորհրդի նախագահ Ռոբերտ Խաչատրյանը:

Փակ քվեարկության արդյունքում Ռուբեն Զաքարյանը ստացավ հինգ, Տիգրան Սանթրյանը՝ երեք, Վարդիկ Սանթրյանը՝ ոչ մի ձայն:

Փաստորեն Դարբասի միջնակարգ դպրոցի տնօրեն ընտրվեց Ռուբեն Զաքարյանը (կառավարության կարգի 26-րդ կետը սահմանում է՝ «Տնօրեն ընտրվում է փակ քվեարկությամբ, խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»):

Ընտրության արդյունքները չեն բողոքարկվել ո՛չ դատական կարգով, ո՛չ նախարարության ներկայացուցչի եզրակացությամբ, ո՛չ էլ հավակնորդներից ու խորհրդի անդամներից որեւէ մեկի առարկությամբ:

Եվ ուրեմն՝ տնօրենի ընտրության մասին եռօրյա ժամկետում գրավոր տեղեկություն է ներկայացվել լիազոր մարմին՝ Սյունիքի մարզպետարան, որտեղ էլ աշխատանքային հինգ օրվա ընթացքում (այդպես է կարգը) ուսումնասիրվել են մրցույթի արդյունքները եւ բողոքելու հիմքեր չեն գտել:

Սակայն…

Սյունիքի մարզպետարանը, ըստ կառավարության նշված կարգի 32-րդ կետի, հինգ աշխատանքային օրում պետք է ընդուներ հետեւյալ որոշումներից մեկը՝ 1)տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթը համապատասխանում է ընտրության կարգի պահանջներին, 2)տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթը չի համապատասխանում կարգի պահանջներին՝ նշելով խախտումները:

Հակառակ կարգի՝ մարզպետարանը սահմանված ժամկետում չի ընդունել այդ որոշումներից որեւէ մեկը:

Նման դեպքում, ինչպես նշված է կարգի 33-րդ կետում, ընդունված է համարվում կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված որոշումը՝ «հաստատության տնօրենի համար անցկացվող մրցույթը համապատասխանում է տնօրենի ընտրության կարգի պահանջներին»:

Եվ, այդուհանդերձ, մարզպետարանը ոչ միայն հինգ աշխատանքային օրվա ընթացքում որոշում չի կայացրել, այլեւ ի դեկավարություն չի ընդունել կարգի 33-րդ կետի պահանջը՝ ընտրված անձնավորությանը թողնելով անորոշության մեջ:

Միայն սեպտեմբերի 22-ին մարզպետարանը գրություն է հղել դպրոցի կառավարման խորհրդի նախագահ Ռոբերտ Խաչատրյանին՝ տեղեկացնելով, որ հնարավոր չէ աշխատանքային պայմանագիր կնքել Ռուբեն Զաքարյանի հետ, քանի որ սահմանված ժամկետում նա դիմում չի ներկայացրել Շենաթաղի հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնից ազատվելու մասին:

Այսքանը…

Հիմա փորձենք ընդհանրացնել կատարվածը:

Դարբասի միջնակարգ դպրոցի տնօրեն է ընտրվել Ռուբեն Զաքարյանը:

Սյունիքի մարզպետարանը չի կատարել կառավա-

էջ 8

ների կատարման ամբողջականության հիմք հանդիսացավ: Առհասարակ ոչ միայն զինվորական ծառայության մեջ, այլեւ յուրաքանչյուր բնագավառում սեփական ոճ ունենալը պարտադիր նախապայման է: Ես այդ ոճը թողնում եմ՝ ակնկալիքով, որ այն ժամանակի ընթացքում էլ ավելի կկատարելագործվի: Մի ամբողջ շենք-շինություն, գույք, այն ամենը, ինչ ձեռք է բերվել տարիների ընթացքում, հանձնում եմ իմ հաջորդին՝ հույսով, որ այդ ամենն էլ ավելի կբարելավվի ու կբարեկարգվի:

Կապանի նորանշանակ զինկոմին կմաղթեմ, որ ավելի լավ զինկոմիսար լինի, ավելի բարձր ցուցանիշներ ունենա, քան ես, եւ այնպիսի ճանապարհ անցած լինի, որ հպարտանա դրանով, եւ անպայման անցյալից դասեր քաղի: Հասարակության հետ այնպիսի ներդաշնակ հարաբերություններ ստեղծի, որ մարդը սիրով մտնի զինկոմիսարիատ, մասնակցի զորահավաքին, զորակոչին, ուշադիր եւ հետեւողական վերաբերմունք ցուցաբերի պատերազմի վետերանների, վիրավորների, զոհված ազատամարտիկների ընտանիքների, ինչպես նաեւ մեր տարածաշրջանի, ազգաբնակչության ապրելաոճի հանդեպ:

- Այս տարիներին ովքե՞ր են եղել Ձեզ համար ընդօրինակման արժանի հրամանատարները, գեներալները, սպաները, առհասարակ՝ ուսուցիչները:

- Սկսեմ Գերմանիայում ծառայելու տարիների իմ հրամանատարից՝ այն ժամանակ փոխգնդապետ Վլադիսլավ Պետրովիչ Նապալկովից, ում վարորդն եմ եղել զինվոր ժամանակ: Նա է եղել առաջին մարդը, ով բառիս բուն իմաստով ստիպել է ինձ զինվորական դառնալ: Նրա հանձնարարությունները կատարում էի զինվորականին վայել պատասխանատվությամբ: Ոգեշնչվել եմ նաեւ Լենինգրադ տեղափոխվելուց հետո գնդի հրամանատար, այդ տարիներին գնդապետ Եվգենի Նիկոլաեւիչ Գուսեւից, ում ճանաչում էի դեռեւս Գերմանիայում ծառայելիս: Սկսեցինք ծառայել եւ շատ կարճ ժամանակ անց ապացուցեցի, որ հայերն ավելի մեծ թվով իսկական, նվիրյալ հրամանատարներ են տվել, քան ԽՍՀՄ մյուս ժողովուրդները: Հետո տեղափոխվեցի հայոց բանակ, որտեղ ինձ համար ուսուցիչ է եղել 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադի մեր առաջին հրամանատարը՝ գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանը, ով իր հմտությամբ, անձնական օրինակով կարողացել է անձնակազմին մարտական ոգի ներշնչել, զինվորական կարգապահություն սահմանել: Ամենաբարձր կոչումս համարում եմ գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի հավանությանն արժանանալը, որ յուրաքանչյուր պաշտոնից եւ կոչումից ավելի բարձր է: Իմ ծառայությունը բարձր են գնահատել Սպարապետ Վազգեն Սարգսյանը, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանը, գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանը եւ այլ բարձրաստիճան զինվորականներ: Զինկոմիսարիատում աշխատելու տարիներին շատ բան սովորեցի ՀՀ զինկոմ, գեներալ-մայոր Արտուշ Հարությունյանից, ով Աֆղանստանում մեծ համբավ է ունեցել, ում գլխի համար մեծ գումար էին առաջարկում: Նրա ծանրակշիռ պահվածքից, չափված-ձեւված խոսքից, կազմակերպվածությունից, կեցվածքից զգում էի, որ կողքիս գեներալ է կանգնած:

- Անձամբ ճանաչել եք Վազգեն Սարգսյանին. պատմեք որեւէ հիշարժան դեպք նրա հետ ունեցած առնչություններից:

- Սպարապետն անձամբ ինձ ճանաչել է, բախտ է վիճակվել հանդիպել նրան: Երբ 97-րդ բրիգադի առաջին գումարտակի հրամանատար էի, 1993թ. ողջ գեներալական շքախմբով եկավ մեր բրիգադ, շրջայց կատարեց, եղավ նաեւ իմ ղեկավարած գումարտակում: Եվ իմ գումարտակի կարգուկանոնից ոգեւորված՝ ուրախությունից գոռաց եւ քահ-քահ ծիծաղելով ասաց. «Բա ասում էիք՝ հայերը չեն կարող բանակ ունենալ: Ասեք, թող գան, նկարահանեն եւ բոլորին ցույց տան, որ բանակ ունենք»: Դրան հաջորդեց խորհրդակցությունը, որին մասնակցում էին նշանավոր զինվորականներ, ինձնից հարցրեց, թե իմ գումարտակից քանի հոգի է փախուստի դիմել: Վեր կացա եւ ասացի, որ Ձեր տված հարցն ինձ համար անհասկանալի է: Ասաց՝ փախուստ բառի իմաստը չե՞ս հասկանում: Ասացի՝ բառի իմաստը հասկանում եմ, բայց չեմ հասկանում՝ հայ զինվորն ինչպե՞ս կարող է փախչել հայոց բանակից: Վեր կացավ, իրեն բնորոշ ոգեւորությամբ ասաց, որ մեկ անգամ եւս կրկնեմ այդ նախադասությունը եւ մոտենալով գրկեց՝ ասելով՝ դու այդպես ծառայի՛ր, մնացածի մասին մենք կմտածենք:

- Էությամբ, ուղնուծուծով զինվորական եք, արդյո՞ք Ձեր հետագա գործունեությունը նույնպես կկապեք բանակի հետ:

- Կրկին բանակում ծառայելու մտադրություն չունեմ, իմ ապագա գործունեության շրջանակները կփնտրեմ քաղաքացիական ոլորտում: Պատրաստ եմ աշխատել թե՛ արտադրական, թե՛ քաղաքական, թե՛ մանկավարժական, թե՛ մշակութային ոլորտներում: Ինչ աշխատանք էլ վստահեն, պատվով կկատարեմ, ինչպես եւ հարիր է իմ գործելաոճին:

Ի դեպ, ասեմ, որ այս ընթացքում բացի զինվորական ծառայությունից, ծավալել եմ նաեւ այսպես ասած ստեղծագործական գործունեություն՝ հեղինակելով «Հետադարձ հայացք» գիրքը, որ ճշմարիտ փաստեր է պարունակում Արցախյան պատերազմի տարիներից, գրելով 25-ից ավելի բանաստեղծություն, 7-8 երգ: Երախտապարտ եմ նաեւ գրքիս խմբագիր Մարտիկ Գալստյանին՝ իսկական հայ մարդուն:

- Երկար տարիներ ուսադիրներ կրելուց հետո հավանաբար նոր կարգավիճակը Ձեր մեջ հոգեբանական առումով հակասական զգացումներ է առաջացրել:

- Հպարտությամբ եմ մտել բանակ եւ նույնպիսի հպարտությամբ էլ հրաժեշտ եմ տալիս, բայց միշտ կանգնած կլինեմ հայոց ազգային բանակիս շարքերում: Ինչո՞ւ եմ ասում բանակիս, որովհետեւ Հայաստանի երրորդ հանրապետության առաջին զորակոչված զինվորի առաջին հրամանատարն եմ եղել, առաջին զինվորական հրամանը շարքի առաջ ես եմ արձակել, զինվորական կուլտուրան առաջինը ես եմ սահմանել եւ այլն: Այն ժամանակ չեն եղել հայոց բանակ, պաշտպանության նախարարություն. առաջին զորակոչը, որի արդյունքում ձեւավորվել է Ներքին գործերի նախարարության Կապանի պահպանության բաժնին կից այլընտրանքային հրաձգային գումարտակը, որ 120 զինվորից էր բաղկացած եւ որտեղ դասակի հրամանատար նշանակվեցի: Այդ ժամանակ խորհրդային բանակից նոր էի զորացրվել, ինձ զինկոմիսարիատից հրավիրեցին եւ ասացին, որ պետք է զորակոչ անցկացնենք: Չէի մտածում, թե որտեղ եւ ինչ պայմաններում է կազմավորվում հայոց բանակը, վերադարձիս նպատակը միայն ու միայն նոր կազմավորվող բանակի շարքերում լինելն էր: 1991թ. նոյեմբերի 1-ին զորակոչը եղավ, նոյեմբերի 5-ին առաջին զինվորները՝ թվով 60 կապանց, շարվեցին ՆԳ Կապանի պահպանության բաժնի հրապարակում եւ ի պատիվ ինձ նրանց առաջին հրամանատարը դարձա: Անձամբ կազմեցի բոլոր ծրագրերը, դասացուցակները եւ Կապանին հարակից Շղարշիկ բանավանում 23-24 օր նախնական զինվորական պատրաստականություն անցնելուց հետո Բաղաբուրջի հուշահամալիրում՝ Հայրենական մեծ պատերազմի զոհվածների հուշակոթողի մոտ, անցկացրինք առաջին երդման արարողությունը եւ ընդունեցինք հաջորդ վաշտը՝ նույնպես 60 զինվորից բաղկացած:

Իմ պարտքը համարում եմ լիարժեք կատարած, բայց քանի դեռ ողջ եմ, պարտք եմ հայրենիքիս, երկրիս: Խիղճս հանգիստ եմ հեռանում, որովհետեւ անհրաժեշտ պահին եղել եմ անհրաժեշտ վայրում եւ զինվորականին վայել կատարել բոլոր գործողությունները: Դա միայն ես չեմ ասում, այլ պատմությունն է վկայում:

- Ինչի՞ համար եք ափսոսում:

- Ափսոսում եմ, որ դժվարությամբ ենք հասնում մեր երազած հանգրվան, որի համար ոչ միայն ջանքեր են ներդրվել, այլեւ կյանքեր զոհաբերվել: Եվ այն բանի համար, որ մեր արժեհամակարգում արժանի մարդիկ չեն գտնվում իրենց համապատասխան սանդղակներին, այսինքն՝ ըստ արժանվույն չեն գնահատվում:

Զրույցը վարեցին
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Դարբաս. միջնակարգ դպրոցի ընտրված տնօրենի հետ մարզպետարանը հրաժարվում է կնքել աշխատանքային պայմանագիր

էջ 7

ության կարգով իր վրա դրված լիազորությունները եւ ապօրինաբար ի չիք է դարձրել մրցույթի արդյունքները, քանի որ ընտրված անձնավորությունն իր քիմքին հաճո չէ: Մարզպետարանի փաստարկը՝ իբր Ռուբեն Զաքարյանը սահմանված ժամկետում աշխատանքից ազատվելու մասին դիմում չի գրել, ոչ միայն շինծու է, այլեւ՝ ծիծաղելի:

Եթե սահմանված ժամկետի մասին է խոսքը եւ եթե Վահե Հակոբյանն էլ ի վիճակի է որեւէ բան ընթերցելու, ապա խորհուրդ կտայինք կարդալ կառավարության կարգի 34-րդ կետը՝ «Լիազորված մարմինն ընտրված տնօրենի հետ… 10 աշխատանքային օրվա ընթացքում կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով»:

Ի դեպ, 10 աշխատանքային օրը լրանում է սեպտեմբերի 25-ին, իսկ մարզպետարանում հարցը փակել եւ կառավարման խորհրդին տեղյակ են պահել սեպտեմբերի 22-ին:

Դա նշանակում է, որ Ռուբեն Զաքարյանը կարող էր Շենաքաղի դպրոցի տնօրենի պարտականություններից ազատվելու մասին դիմում գրել մինչեւ սեպտեմբերի 25-ը, եւ այն դեպքում, երբ լիազոր մարմինը որոշում ընդունած լիներ նշված կարգի 32-րդ կետի համաձայն՝ մրցույթին հաջորդած հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ռուբեն Զաքարյանը պնդում է, որ ինքը, բնականաբար, սահմանված ժամկետում դիմում կգրեր Շենաքաղի դպրոցից ազատվելու մասին, եթե սահմանված կարգով ու ժամկետում մարզպետարանն ընդուներ որոշում իր ընտրվելու մասին եւ իրեն իրազեկ դարձներ: Բայց մարզպետարանը որոշում չի ընդունել՝ ստեղծելով անորոշ վիճակ:

Ինչո՞ւ է մարզպետարանը հերթական անգամ նման անազնիվ ու ապօրինի քայլի դիմել:

Սիսիանում եւ հատկապես Դարբասում շրջանառվում է երկու վարկած, որոնք, ի վերջո, փոխլրացնում են միմյանց:

Մարզպետի թեկնածուն եղել է Տիգրան Սանթրյանը, ում էլ, ըստ գյուղից ստացված տեղեկությունների, մերժել են հենց այն պատճառով, որ մարզպետի թեկնածուն է:

Տիգրան Սանթրյանը Սիսիանի հիվանդանոցի՝ վերջերս նշանակված տնօրեն Անուշ Ներսիսյանի ամուսինն է:

Մարզպետին դեռեւս ամիսներ առաջ են Երեւանից հանձնարարել ամուսիններին պաշտոն տալ՝ մեկին՝ հիվանդանոցի, մյուսին՝ դպրոցի տնօրեն: Հենց այդ խնդիրն էլ փորձում է լուծել Վահե Հակոբյանը:

Մյուս վարկածի համաձայն՝ կատարվածը Սիսիանի նախընտրական զարգացումների հերթական դրսեւորումներից մեկն է: Իբր հայտնի ընտանիքը հերթական անգամ իր տնային շահերին է ծառայեցրել մարզպետի աթոռը զբաղեցնող անձնավորությանը՝ հանձնարարելով նրան՝ կանգնեցնել Ռուբեն Զաքարյանի նշանակումը, քանի որ նա մրցակից թիմի կողմնակիցներից է:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու երկու ելք կա. 1)ընտրված տնօրենը գնում է դատարան եւ փորձում տեր կանգնել իր իրավունքներին, 2)ընտրված տնօրենը խնդրում է կրթության եւ գիտության նախարարի միջամտությունը:

Երկու տարբերակին էլ Ռուբեն Զաքարյանը համաձայն չէ՝ համոզված լինելով, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը չի կարող ինքնուրույն եւ արդարացի որոշում կայացնել, իսկ կրթության նախարարն այդ փուլում լիազորություն չունի:

Անշուշտ, կա եւ երրորդ ճանապարհը՝ բռնել մարզպետի կասկածելի ձեռքը եւ գործող կարգի համաձայն ընտրյալ տնօրենի հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

Իսկ կա՞ մեկը, որ կբռնի Վահե Հակոբյանի ձեռքը:

Իհարկե կա, բայց այդ դեպքում Քաջարանի կոմբինատը գլուխ կբարձրացնի՝ իր միակ գործիքով…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Դատավոր Մուրադի ապօրինի վճռով զավթված բնակարանը վերադարձվել է օրինական տերերին

«Սյունյաց երկիր» թերթի 2017թ. հուլիսի 1-ի համարում հրապարակել էր հոդված՝ «Մուրադ Հովակիմյան. դատավո՞ր, թե՞ անգրագիտության անձեռակերտ հուշարձան» վերտառությամբ:

Հոդվածն այն մասին է, թե ինչպես է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մուրադն ապօրինի վճռով հինգ հոգու Գորիս քաղաքում զրկել սեփական բնակարանից: 7.5 մլն դրամ արժողությամբ բնակարանը, ի վերջո, ԴԱՀԿ-ն վաճառել էր ինչ-որ անհայտ անձնավորության 877 հազար դրամով՝ փողոց շպրտելով 86-ամյա տիկնոջը, 4-ամյա երեխային…

Հուլիսի 6-ին թերթի խմբագրությունը տեղեկություն ստացավ առ այն, որ զավթված բնակարանը վերադարձվել է օրինական տերերին:

Պարզվել է, որ 7.5 մլն դրամ արժողությամբ բնակարանը (Գորիս քաղաքի Գետափնյա 14/21 հասցեում) 877 հազար դրամով «վաճառվել է» ԴԱՀԿ-ի աշխատակիցներից մեկի զոքանչին (բնակարանի սեփականատերերից մեկը՝ Վալենտինա Այվազյանը, չցանկացավ հանրությանը ներկայացնել ԴԱՀԿ-ի այդ աշխատակցի անունը):

Սեփական բնակարանն օրինական տերերից զավթելու գործարքի շուրջ մեր հրապարակումից հետո բարձրացած աղմուկը պատճառ է դարձել, որ ԴԱՀԿ-ի աշխատակցի

զոքանչը (իր փեսային հնարավոր պատասխանատվությունից փրկելու համար) բնակարանն իրական տերերին վերադարձնի այն գնով, ինչ գնով ձեռք է բերել: Կողմերը եկել են համաձայնության, եւ առուվաճառքի պայմանագիրն արդեն նոտարական վավերացում է ստացել:

Խնդիրն ըստ էության լուծվել է, բայց բարձրացված աղմուկը չի մարում: Մարդիկ ողջամիտ հարց են բարձրացնում՝ արդյո՞ք սա միակ դեպքն է, որ դատավոր Մուրադը ԴԱՀԿ-ի համապատասխան աշխատակցի հետ, օրենքը շրջանցելով, քաղաքացիներին զրկում է սեփական բնակարանից՝ բանկային պարտքերը մարելու պատրվակով:

Սեփ.լրատվություն

Սյունեցի երիտասարդ նկարիչները մասնակցեցին «Երիտասարդ նկարիչների միջազգային 6-րդ պլեներ»-ին

2012 թվականից Շիրակի մարզպետարանի նախաձեռնությամբ Շիրակի մարզի Թորոսգյուղ համայնքին կից գտնվող «Երեքնուկ» հանգստի գոտու տարածքում անց է կացվում «Մինասի գույներով» խորագրով «Երիտասարդ նկարիչների միջազգային ամենամյա պլեները», որին մասնակցում են երիտասարդ նկարիչներ ՀՀ բոլոր մարզերից, մայրաքաղաք Երեւանից, Արցախից, սփյուռքից եւ արտերկրից: Պլեների նպատակն է՝ երիտասարդ արվեստագետների միջեւ ստեղծել միջմշակութային համագործակցության հարթակ՝ այն ծառայեցնելով որպես մշակութային երկխոսության երաշխիք:

Այս տարի նույնպես Շիրակի մարզում օգոստոսի 22-25-ն ընկած ժամանակահատվածում անցկացվեց «Երիտասարդ նկարիչների միջազգային պլեները», որը նվիրվել է հայ մեծանուն ծովանկարիչ Հովհ.Այվազովսկու ծննդյան 200-ամյակին եւ որին մասնակցեց 45 երիտասարդ նկարիչ Հայաստանից, Արցախից, Վրաստանից եւ Բելառուսից:

Սյունիքի մարզն այս տարի ներկայացնում էին Ռաֆայել Առաքելյանը (Կապան), Էդգար Ստեփանյանը (Կապան), Սոնա Արզումանյանը (Գորիս): Ինչպես տեղեկացրին մասնակիցներից Ռ.Առաքելյանը եւ Է.Ստեփանյանը, պլեների օրերին անցկացվեցին վարպետաց դասեր, էքսկուրսիաներ, բացօթյա նկարչություն Երերույքի տաճարի եւ Մարմաշենի վանական համալիրի տարածքներում, իսկ վերջին օրն այցելեցին Ջաջուռ՝ Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան: Երիտասարդ նկարիչների խոսքով՝ սա եւս մեկ հնարավորություն է փորձի փոխանակման, այլ նկարիչների հետ շփվելու համար: **«Հաճելի օրեր ենք անցկացրել, հետաքրքիր ու հագեցած տարբեր միջոցառումներով: Հաշվի առնելով մեր ակտիվ մասնակցությունը, լավ պահվածքը՝ հաջորդ տարի եւս մեր մարզից այլ երիտասարդ նկարիչներ կմասնակցեն պլեներին, իսկ մենք ներկա կլինենք հյուրի կարգավիճակով»,** - նշեցին նրանք՝ հավելելով, որ յուրաքանչյուր նկարիչ միայն մեկ անգամ որպես մասնակից կարող է մասնակցել պլեներին:

Միջոցառման ավարտին Շիրակի մարզպետ Արթուր Խաչատրյանը մասնակիցներին շնորհակալագրեր հանձնեց՝ խոստանալով հաջորդ տարի այն ավելի բազմազան ու բազմաբնույթ դարձնել, վերանայել դրա անցկացման ժամկետի չափը:

Մեր մարզի մասնակիցների պատկերած կտավը կցուցադրվի հաջորդ տարի կայանալիք պլեների բացմանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թափուր աշխատատեղի հայտարարություն

«Քոնսեկոարդ» ՍՊ ընկերությունը հայտարարում է մրցույթ քարտուղար/Գրասենյակի ղեկավար թափուր աշխատատեղի համար՝ «Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» ծրագրի իրականացման գրասենյակի թիմում աշխատելու նպատակով: Աշխատանքի մանրամասն նկարագրին եւ սահմանված չափորոշիչներին կարող եք ծանոթանալ www.consecoard.am կայքի «Հայտարարություններ» բաժնում: Հետաքրքրված անձինք կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը եւ ուղեկցող նամակը tevosyan@consecoard.am եւ h.khachatryan@consecoard.am էլ-փոստի հասցեներին մինչեւ ս.թ.-ի հոկտեմբերի 6-ը ներառյալ:

Հարցազրույցի կհրավիրվեն միայն կարճ ցուցակում ընտրվող թեկնածուները:

Vacancy Announcement

“Consecoard” LLC announces a competition for the position of Secretary/Office Manager, to join to the team of “Support Programme for the Protected Areas-Armenia” Project Implementation Unit. You can find the detailed job description and defined requirements at www.consecoard.am website by referring to the section of “Announcements”. All interested candidates are invited to send their CVs and motivation letter to tevosyan@consecoard.am and h.khachatryan@consecoard.am e-mails up to the October 6th of the year.

Please note that only shortlisted candidates will be invited to the interview.

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց Երկրին» պարտադիր է:

® Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 29.09.2017թ.: